Ն-64

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆՈՒՄՅԱՆ ՄԵԼԻՆԵ ՎԱՀԵԻ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1919-1921 թթ.)

Է.00.02-«Համաշխարհային պատմություն»
մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2012

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր
Ավագյան Ա.Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
Ստեփանյան Ս.Ս.

պատմական գիտությունների թեկնածու
Պողոսյան Բ.Պ.

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. հուլիսի 19-ին, ժ. 13.00, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. հունիսի 15-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու Ղազարյան Ռ.Պ.

25.06.2012

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1919-1921 թթ. Օսմանյան կայսրությունում կայացած երիտթուրքերի դատավարությունների ուսումնասիրությունը գիտական կարևոր նշանակություն ունի երիտթուրքական կուսակցության ձևավորման պատմության, գաղափարախոսության, կառուցվածքի և կառավարման, պետական ու կուսակցական ապարատի միավորման, պետությունը Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշելու, ինչպես նաև՝ Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրականացման մեխանիզմների բացահայտման տեսակետներից: Այն նաև նպաստում է մերօրյա Թուրքիայում ընթացող քաղաքական գործընթացների ակունքների և պատճառների բացահայտմանը:

1919-1921 թթ. իթթիհադականների դատավարությունների վերլուծությունը էական նշանակություն է ձեռք բերում հատկապես Հայոց ցեղասպանության հարյուրամյակի նախօրեին տեղի ունեցող միջազգային ճանաչման գործընթացի համատեքստում, քանի որ Օսմանյան կայսրությունը, որի իրավահաջորդը դարձավ Թուրքիայի Հանրապետությունը, նշյալ դատավարությունների շնորհիվ ճանաչել է իրականացված ոճրագործության փաստը: 1919-1921 թթ. դատավարությունների համապարփակ ուսումնասիրությունը կարևորվում է նաև Հայոց ցեղասպանության վերաբերյալ նոր փաստաթղթերի հրապարակման առումով, քանզի հիշյալ դատավարություններին նախորդած հետաքննությունների և դատաքննությունների վավերագրերն ու դատավճիռները լիովին բացահայտում են Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրագործման մեխանիզմները: Նկատի ունենալով Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում արդի Թուրքիայի ժխտողականությունը՝ կարևորվում է 1919-1921 թթ. հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված դատական գործերի նիստերում ներկայացված մեղադրական ակտերը, դատաքննության ընթացքում ունկնդրության արժանացած վկաների և ամբաստանյալների ցուցմունքները, ընթերցված ծածկագիր հեռագրերը և դատավճիռներն ընդգրկող փաստաթղթերի դերը՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար մղվող պայքարում:

2. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է Օսմանյան կայսրությունում «Միություն և առաջադիմություն» կուսակցության բոլոր դատավարությունների համակողմանի

ուսումնասիրման ու լուսաբանման անհրաժեշտությամբ: Ատենախոսության հիմնական նպատակներն են՝ համապարփակ կերպով ներկայացնել իթթիհադականների դատավարությունները նոր փաստաթղթերի լույսի ներքո, բացահայտել դատավարությունների քաղաքական շարժառիթները և ցույց տալ իթթիհադական մտայնության և ավանդույթի պահպանման հիմքերը Թուրքիայի Հանրապետության քաղաքական գաղափարախոսության մեջ:

Նկատի ունենալով ուսումնասիրվող թեմայի ընդգրկուն բնույթը՝ աշխատանքը սահմանափակվում է բացառապես հետևյալ խնդիրների առաջադրմամբ.

- Համառոտ կերպով պարզաբանել Մուդրոսի զինադադարի կնքմանը (1918 թ. հոկտեմբերի 30) հաջորդած ամիսներին Օսմանյան կայսրությունում տիրող ներքաղաքական մթնոլորտը:
- Լուսաբանել Հայոց ցեղասպանության պատասխանատուների նկատմամբ կատարված հետաքննությունները Օսմանյան կայսրությունում 1918 թ. վերջերին և 1919 թ. սկզբներին:
- Ազգայնական շարժման համատեքստում վերլուծել 1919-1921 թթ. երիտթուրքերի դատավարությունների ընթացքը, օտար պետությունների միջամտությունը դատական գործընթացներին և համառոտ տեղեկություններ հաղորդել հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով Ստամբուլում կայացած դատական գործերի մասին:
- Օսմաներենից թարգմանաբար նոր փաստաթղթեր հրապարակել 1919-1921 թթ. երիտթուրքերի դատավարությունների վերաբերյալ, մասնավորապես՝ գիտական շրջանառության մեջ դնել օսմանյան «Ալեմդար» և «Մեմլեքեթ» օրաթերթերում տպագրված՝ հայերի տեղահանության և կոտորածների դատավարությունների նիստերը ներկայացնող հրապարակումները և Տրապիզոնի դատական գործի մեղադրական ակտը, որոնց մի մասը բացակայում է «Թաքվիմ-ի վեքայի» պաշտոնաթերթում հրապարակված դատավարությունների սղագրություններում:
- Ներկայացնել հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով 1919-1921 թթ. կայացած դատավարությունների կազմակերպման իրական պատճառներն ու շարժառիթները:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության գիտական նորույթն է 1919-1921 թթ. հայերի տեղահանության և կոտորածների դատաքննությունների վերաբերյալ նոր օսմանյան փաստաթղթերի հրապարակումը: Խոսքը մասնավորապես վերաբերում է օսմանյան «Ալեմդար» օրաթերթում տպագրված Յոզղատի, Տրապիզոնի, Խարբերդի և Բյույուք Դերեի դատավարությունների նիստերը ներկայացնող հրապարակումներին և Տրապիզոնի հայերի

տեղահանության ու կոտորածների ամբաստանագրին, որոնք մինչև օրս չէին հրատարակվել որևէ երկրում:

Ատենախոսությունն արխիվային աղբյուրների, ժամանակի մամուլի, ժամանակակիցների հուշերի, հետազոտական ուսումնասիրությունների հենքի վրա 1919-1921 թթ. երիտթուրքերի դատավարությունները համապարփակ ներկայացնելու փորձ է:

4. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ուսումնասիրությունն ընդգրկում է 1918-1921 թթ. ընկած ժամանակահատվածում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունները: Սակայն հեղինակը նյութն ավելի համապարփակ ներկայացնելու, իր առջև դրված խնդիրներին առավել համակողմանի մոտեցում ցուցաբերելու համար ատենախոսության առաջին գլխի առաջին ենթագլխում անդրադարձ է կատարում նաև 1911 թ. «Միություն և առաջադիմություն» կուսակցության IV համագումարին և 1913 թ. երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի նիստին: Խնդիրը համապարփակ կերպով լուսաբանելու նպատակով վերջին գլխի վերջին ենթագլխում համառոտ համեմատություն է արվում 1919-1921 թթ. և 1926 թ. երիտթուրքերի դատավարությունների որոշ ասպեկտների միջև:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Հեղինակն ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել է երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների մասին տարբեր փաստաթղթեր հետազոտելու, դրանք պատմահամեմատական ու պատմահամադրական մեթոդներով վերլուծելու սկզբունքով: Եզրահանգումները կատարվել են սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համադիր վերլուծության հիման վրա:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրությունը, բացի գիտականից, ունի նաև գործնական-կիրառական նշանակություն: Ատենախոսության մեջ ներկայացված փաստերը, առաջ քաշված դրույթները, կատարված մեկնաբանությունները և եզրահանգումները կարող են օգտակար լինել Օսմանյան կայսրության և Թուրքիայի պատմության ինչպես առանձին հիմնախնդիրների ուսումնասիրման, այնպես էլ արդի փուլում տեղի ունեցող մի շարք գործընթացներ վերլուծելու առումով: Ատենախոսության մեջ արծարծված փաստերը կարող են նպաստել Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատմության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացմանը:

Աշխատանքը կարող է օգտակար լինել ոչ միայն պատմաբաններին, այլ նաև քաղաքական գործիչներին և դիվանագետներին՝ Հայոց ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման համար և թուրքական ժխտողականության դեմ պայքարելու հարցերում:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժինը: Այն քննարկվել է նաև ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտության բաժնում: Աշխատանքի հիմնական դրույթները և եզրահանգումները ներկայացվել են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում և մենագրության մեջ, ինչպես նաև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում կայացած մի շարք հանրապետական և միջազգային գիտաժողովներում ընթերցված զեկուցումներում:

8. ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը շարադրված է հայերեն, օսմաներեն, թուրքերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով հրատարակված արխիվային վավերագրերի, հայ և օտարազգի ուսումնասիրողների կազմած փաստաթղթերի ժողովածուների, ժամանակակիցների հուշերի, ժամանակի օսմանյան և պոլսահայ մամուլի, հայ և օտարազգի ուսումնասիրողների աշխատությունների ու հոդվածների հետազոտության և վերլուծության հիման վրա:

Ատենախոսության մեջ երիտթուրքերի 1919-1921 թթ. դատաքննությունները լուսաբանելու համար սկզբնաղբյուր են հանդիսացել օսմանյան պաշտոնաթերթ «Թաքվիմ-ի վեքայի»-ի հավելվածներում 1919-1920 թթ. արաբատառ օսմաներենով տպագրված՝ երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների դատաքննությունների արձանագրությունները[1]:

1919-1921 թթ. երիտթուրքերի դատավարությունների թեման ուսումնասիրելիս հեղինակն օգտվել է նաև հայ և թուրք պատմաբանների կողմից հրապարակված արխիվային փաստաթղթերից: 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին օսմանյան խորհրդարանում հայերի կոտորածների խնդրի քննարկումը լուսաբանելու առումով

[1] Takvîm-i Vekayi, 1919-1920.

ուսումնասիրությանը նպաստել է ցեղասպանագետ Վ. Դադրյանի[2] հրատարակած փաստաթղթերի ժողովածուն:

Երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների, շրջանային պատասխանատու քարտուղարների դատական նիստերի արձանագրությունների, ինչպես նաև՝ Յոզղատի, Տրապիզոնի, Խարբերդի և Բյուլուք Դերեի դատավճիռների քնագրերի հայերեն թարգմանությունը կատարել է օսմանագետ Ա.Հ. Փափազյանը[3]:

Թուրք ուսումնասիրողների շրջանում գլխավոր դատավարությունների որոշ հատվածների առաջին տառադարձումը՝ արաբատառ օսմաներենից լատինատառի, 1988 թ. կատարել է պատմաբան Օսման Սելիմ Քոջահանօղլուն, որի կազմած «Իթթիհադականների հարցաքննությունն ու դատավարությունը (1918-1919)» վերնագրով փաստաթղթերի ժողովածուում լատինատառ օսմաներենով ներկայացված են օսմանյան խորհրդարանի հինգերորդ հանձնախմբի կողմից իրականացված հարցաքննության արձանագրությունները և երիտթուրքական կուսակցության ու կառավարության անդամների դատաքննության մի քանի նիստեր[4]:

Վ. Դադրյանի և Թ. Աքչամի համատեղ կազմած և 2008 թ. Ստամբուլում հրատարակած «Տեղահանություն և կոտորածներ. Ռազմական արտակարգ ատյանի արձանագրությունները: «Միություն և առաջադիմություն» կուսակցության դատավարությունը 1919-1922 թթ.» վերնագրով ժողովածուում ոչ միայն ներկայացված է երիտթուրքական կուսակցության և կառավարության անդամների դատաքննությունների ամբողջական արձանագրությունների՝ արաբատառ օսմաներենից լատինատառ օսմաներենի տառադարձված տարբերակը, այլ նաև դրանց ընթերցումը դյուրացված է՝ կից տրված թուրքերեն հոմանիշների շնորհիվ[5]:

[2] **Տատրեան Վ.,** Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, տպ. «Պայքար», Մասաչուսեթս,1995, 147 էջ:

[3] **Փափազյան Ա.,** Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1989, 256 էջ: Նույնը 2005 թ. վերահրատարակվել է Լոս Անջելեսում:

[4] **Kocahanoğlu O. S.,** İttihat Terakki'nin Sorgulanması ve Yargılanması (1918-1919), İstanbul, 1998, 648 s.

[5] **Dadrian V., Akçam T.,** "Tehcir ve Taktil", Divan-ı Harb-i Örfî Zabıtları, İttihad ve Terakki'nin Yargılanması 1919-1922, Bilgi Üniversitesi Yayınları, İstanbul, 2008, 732 s. Սույն աշխատության կրճատված տարբերակը թարգմանվել է նաև անգլերեն, տե՛ս **Vahakn N. Dadrian and Taner Akçam,** Judgment at İstanbul; The Armenian Genocide Trials, Toronto, 2011, 363 p.

Ատենախոսության մեջ Հայոց ցեղասպանությանն առնչվող որոշ փաստերի լուսաբանման համար հեղինակն օգտվել է Թուրքիայի Հանրապետության կառավարությանը կից Պետական արխիվների գլխավոր վարչության հրատարակած «Հայերը Օսմանյան կայսրությունում (1915-1920)»[6] վերնագիրը կրող փաստաթղթերի ժողովածուի վավերագրերից:

Մալթա աքսորված հանցագործների վերաբերյալ տեղեկություններ է պարունակում Վարդգես Եղիայանի կազմած «Մալթայի վավերագրերը. Անգլիայի արտաքին գործերի նախարարության «Թուրք պատերազմական հանցագործները» բդթապանակը»[7] փաստաթղթերի ժողովածուն: Թուրք պատմաբաններից այդ խնդրին անդրադարձել է Բիլալ Շիմշիրը «Մալթայի աքսորյալները»[8] մենագրության մեջ:

Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում հայերի կոտորածները կազմակերպած նահանգապետերի, գավառապետերի և այլ կառավարիչների դատաքննությունների վերաբերյալ կարևոր աղբյուր են ծառայում նաև 1918-1921 թթ. Ստամբուլում տպագրված ինչպես օսմաներեն, այնպես էլ հայալեզու, ֆրանսալեզու, և հունալեզու պարբերականները: Ժամանակի մամուլում են տպագրվել նաև «Թաքվիմ-ի վեքայի»-ում տեղ չգտած որոշ դատավարությունների արձանագրություններ, մեղադրական ակտեր ու դատավճիռներ: Հեղինակն աշխատության մեջ լայնորեն օգտվել է հատկապես Ստամբուլում տվյալ ժամանակաշրջանում տպագրված օսմանյան «Ալեմդար» օրաթերթում հրատարակված Յոզղատի, Տրապիզոնի, Խարբերդի և Բյույուք Դերեի դատավարությունների նիստերը ներկայացնող հրապարակումներից, հիշյալ պարբերականի պատասխանատու խմբագրի և տնօրենի՝ հայերի տեղահանության և կոտորածների տարբեր դատաքննությունների ընթացքը մեկնաբանող խմբագրական հոդվածներից և բարձրաստիճան պաշտոնյաների հարցազրույցներից[9]: 1919-1921 թթ. դատավարություններին վերաբերող փաստերի շարադրման հարցում ատենախոսին օգտակար են եղել նաև օսմանյան «Սեմլեքեթ»[10], «Փեյամ-ը սաբահ»[11] և «Թասվիր-ի էֆքյար»[12] պարբերականներում տեղ գտած որոշ հրապարակումներ: Ժամանակի պոլսահայ մամուլից հեղինակն

[6] Osmanlı Belgelerinde Ermeniler (1915-1920), T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü, Ankara, 1994, 627 s.
[7] **Yeghiayan V.,** Malta Belgeleri, İngiltere Dışişleri Bakanlığı "Türk Savaş Suçluları" Dosyası, Belge Yayınları, İstanbul, 2007, 539 s.
[8] **Şimşir B.,** Malta Sürgünleri, Bilgi Yayınevi, İstanbul, 1985, 421 s.
[9] Alemdar, 1919.
[10] Memleket, 1919.
[11] Peyâm-ı Sabah, 1920.
[12] Tasvir-i Efkâr, 1919.

օգտագործել է «Ժողովուրդ»[13], «Ժողովուրդի ձայնը»[14], «Ճակատամարտ»[15] և «Վերջին լուր»[16] պարբերականներում տպագրված հրապարակումները:

Աշխատության՝ 1919-1921 թթ. դատավարություններին վերաբերող իրադարձությունների լուսաբանմանը նպաստել են նաև տվյալ ժամանակաշրջանում ապրած քաղաքական գործիչների և հրապարակախոսների հուշերը: Հեղինակը թուրք քաղաքական գործիչների շարքում քննական հայացքով օգտվել է Ահմեթ Ռեֆիք Ալթընայի[17], Ֆալիհ Ռըֆքը Աթայի[18], Հալիլ փաշայի[19], Հյուսամեթթին Էրթյուրքի[20], Գալիփ Վարդարի[21], դոկտոր Մեհմեթ Ռեշիդի[22], Միթհաթ Շյուքրյու Բլեդայի[23], Հալիլ Մենթեշեի[24], Թալեաթ փաշայի[25], Յունուս Նադիի[26] և Հասան

[13] «Ժողովուրդ», 1919:
[14] «Ժողովուրդի ձայնը», 1919:
[15] «Ճակատամարտ», 1919-1921:
[16] Վերջին լուր, 1919:
[17] **Refik A. (Altınay),** İki Komite, İki Kıtal, Bedir Yayınevi, İstanbul, 1999, 95 s.; **Refik A.,** Kafkas Yollarında. İki Komite İki Kıtal, Temel Yayınları, İstanbul, 1998, 223 s.
[18] **Atay F. R.,** Zeytindağı, Bateş, İstanbul, 1981, 140 s.
[19] **Halil Paşa,** İttihat ve Terakki'den Cumhuriyet'e Bitmeyen Savaş, Derleyen: Taylan Sorgun, Kamer Yayınları, İstanbul, 1997, 381 s.
[20] **Ertürk H.,** İki Devrin Perde Arkası, Sebil Yayınları, İstanbul, 1996, 528 s.
[21] İttihat ve Terakki İçinde Dönenler, Anlatan: Galip Vardar, Yazan: Samih Nafiz Tansu, Yeni Zamanlar Yayınları, İstanbul, 2003, 584 s.
[22] İttihat ve Terakki'nin Kurucu Üyelerinden Dr. Reşid Bey'in Hatıraları. "Sürgünden İntihara", Yayına Hazırlayan: Ahmet Mehmetefendioğlu, Arba Yayınları, İstanbul, 1993, 81 s.
[23] **Bleda M. Ş.,** İmparatorluğun Çöküşü, Remzi Kitabevi, İstanbul, 1979, 200 s.
[24] Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları, Yay. Haz. İsmail Arar, Hürriyet Vakfı Yayınları, İstanbul, 1986, 254 s.
[25] Talât Paşa'nın Hatıraları, H. Yalçın'ın Önsözüyle, Yeni Matbaa, İstanbul, 1958, 145 s.; **Çavdar T.,** Talât Paşa, Bir Örgüt Ustasının Yaşamöyküsü, 4. Baskı, İmge Kitabevi, İstanbul, 2001, 592 s.
[26] **Nadi Y.,** Kurtuluş Savaşı Anıları, Erdini Basım ve Yayınevi, İstanbul, 1978, 398 s.

Ամջայի[27], ինչպես նաև՝ երիտթուրքական շրջանում Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի ռեզիդենտ Օբրի Հերբերտի[28] հուշերից:

Ատենախոսը Մուդրոսի զինադադարին անմիջապես հաջորդած ժամանակաշրջանի և Թուրքիայում ազգայնական շարժման ծավալման տարիների որոշ իրադարձությունների լուսաբանման համար օգտվել է թուրք պատմաբաններ Դ. Ավջըօղլուի[29], Ս. Սելեքի[30], Թ. Աքչամի[31] մենագրություններից, որոնք տարբերվում են թուրքական պաշտոնական պատմագրության մեջ ընդունված թեզից, ինչպես նաև՝ օգտագործել Զ. Սարըհանի[32]՝ օսմանյան մամուլից քաղած դեպքերի ժամանակագրությունը ներկայացնող աշխատությունը, Ս. Աքշինի[33] և Թ. Սորգունի[34] գրքերը: Հարկ է նշել, որ Աքշինի և Սորգունի ուսումնասիրություններից օգտվելիս, ի նկատի ունենալով ազգայնական շարժման նկատմամբ վերջիններիս կողմնակալ դրույթները, քաղել է զուտ պատմական փաստեր:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության բնույթի և գործունեության մասին համակողմանի պատկերացում կազմելու համար ատենախոսը հիմնականում օգտվել է թուրք հայտնի պատմաբան Թ. Զ. Թունայայի[35]՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատմությանը նվիրված համապարփակ աշխատությունից, իսկ ազգայնական պայքարում երիտթուրքերի ունեցած էական ներդրման

[27] **Ամջա Հ.**, Տեղահանություն և ոչնչացում (Տեղահանության իրական պատկերը), օսմաներենից թարգմանությունը, ներածականն ու ծանոթությունները՝ Ա.Գ. Ավագյանի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտ, Երևան, 2007, 48 էջ:

[28] **Herbert A., Ben Kendim.** A Record of Eastern Travel, Hutchinson, London, 1924, 380 p.

[29] **Avcıoğlu D.**, Millî Kurtuluş Tarihi 1835den-1995e, 1. Cilt, İstanbul, 1996, 421 s.

[30] **Selek S.**, Anadolu İhtilali, Cilt 1, Kastaş Yayınevi, İstanbul, 2000, 400 s.

[31] **Akçam T.**, İnsan Hakları ve Ermeni Sorunu. İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na, 2. Baskı, İmge Kitabevi, İstanbul, 2002, 640 s.

[32] **Sarıhan Z.**, Kurtuluş Savaşı Günlüğü, I. Cilt, Mondros'tan Erzurum Kongresi'ne (30 Ekim 1918-22 Temmuz 1919), Öğretmen Yayınları, İstanbul, 1982, 423 s.

[33] **Akşin S.**, İstanbul Hükümetleri ve Milli Mücadele, Öztürk Matbaası, İstanbul, 1983, 629 s.

[34] **Sorgun T.**, Mütareke Dönemi ve Bekirağa Bölüğü, Kamer Yayınları, İstanbul, 1998, 440 s.

[35] **Tunaya T. Z.**, Türkiye'de Siyasal Partiler, Cilt 3, İttihat ve Terakki, Bir Çağın, Bir Kuşağın, Bir Partinin Tarihi, İletişim Yayınları, İstanbul, 2000, 800 s.

հարցերը լուսաբանելիս հիմնվել է հոլանդացի ուսումնասիրող Է. Յ. Յյուրխերի[36] աշխատության վրա:

Հեղինակը 1919-1921 թթ. երիտթուրքերի որոշ դատական գործեր քննելիս օգտվել է նաև մի քանի պատմաբանների ուսումնասիրություններից: Յոզղատի տեղահանության ու կոտորածների դատավարության մի շարք նիստերի արձանագրություններ օսմաներենից արևմտահայերեն է թարգմանել ու հրատարակել հայր Գրիկերը (Գրիգոր Կերկերյան)՝ «Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը» փաստագրական մենագրության մեջ[37]: Հ. Գ. Ղազարյանը «Յեղասպան թուրքը» գրքում թարգմանել և հրատարակել է օսմանյան «Թերջյուման-ը հաքիքաթ» օրաթերթի՝ 1920 թ. օգոստոսի 5-ի համարում տեղ գտած՝ Բաքերդի հայերի տեղահանության և կոտորածների պատասխանատուների վերաբերյալ կայացված դատավճիռը[38]: Երիտթուրքերի կուսակցության և կառավարության անդամների դատավարության ամբաստանագիրն առաջին անգամ օսմաներենից հայերեն է թարգմանել և 1921 թ. Բոստոնում տպագրված «Մեծ ոճիրը» գրքում հրատարակել Արամ Անտոնյանը[39]: Սույն դատավարությունների վերաբերյալ 1919-1920 թթ. ստամբուլյան մամուլից քաղված առանձին նյութեր հայերեն է թարգմանել ու հրատարակել նաև Ջոն Կիրակոսյանը[40]: Երիտթուրքերի դատական գործերին մենագրություններում անդրադարձել է նաև Վահագն Դադրյանը[41]:

1919-1921 թթ. հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով կայացած որոշ դատական գործեր քննվել են նաև օտարազգի ուսումնասիրողների կողմից: Այսպես՝ ֆրանսիացի հետազոտող Ժ.Մ. Գառզուն 1975 թ. հրատարակած «Օրինակելի ցեղասպանություն. Հայաստան, 1915» աշխատության մեջ օսմաներեն բնագրից ֆրանսերեն է թարգմանել Յոզղատի, Տրապիզոնի և Խարբերդի հայերի տեղահանության ու կոտորածների պատասխանատուներին վերաբերող դատավճիռները[42]: Թուրք պատմաբաններից երիտթուրքերի

[36] **Zürcher E. J.**, The Unionist Factor. The Role of Committee of Union and Progress in Turkish National Movement 1906-1926, Leiden, 1984, 201 p.

[37] **Գրիկէր**, Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, 468 էջ:

[38] **Ղազարեան Հ.**, Յեղասպան թուրքը, Պէյրութ, 1968, 424 էջ:

[39] **Անտոնյան Ա.**, Մեծ ոճիրը, Պոսթըն, 1921, 305 էջ:

[40] **Կիրակոսյան Ջ.**, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հատոր երկրորդ, Երևան, 1983, 464 էջ:

[41] **Dadrian V.**, Ulusal ve Uluslararası Hukuk Sorunu Olarak Jenosid, Belge Yayınları, İstanbul, 1995, 221 s; **Dadrian V.**, Histoire du Génocide Arménien, Stock, Paris, 1996, 694 p.

[42] **Garzou J.-M.**, Un Génocide Exemplaire: Armenie 1915, Paris, 1975.

1919-1921 թթ. որոշ դատական գործերի են անդրադարձել Թ. Աքչամը[43], Բ. Շիմշիրը[44] և Ֆ. Աբան[45]: Ատենախոսը վերջին երկու ուսումնասիրողների գրքերից օգտվել է մեծ վերապահությամբ և աշխատության մեջ օգտագործել միայն պատմական որոշ փաստեր, քանի որ նրանք հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով 1919-1921 թթ. կայացած դատաքննություններին անդրադառնալիս անաչառ վերաբերմունք չեն ցուցաբերում: Այսպես, օրինակ, Ֆ. Աբան «Թուրքական պատմագիտական ընկերության» ("Türk Tarih Kurumu") պատվերով գրած «Տեղահանության դատավարությունները գրավյալ Ստամբուլում» վերնագրով իր աշխատության մեջ փորձ է անում խեղաթյուրել դատաքննություններին առնչվող որոշ փաստեր կամ այլ մեկնաբանություններ տալ դրանց: Ֆ. Աբայի վերոհիշյալ աշխատության վերնագիրն անգամ բավարար է՝ ցույց տալու, թե սույն մենագրությունը հրատարակելով՝ ինչ նպատակ են հետապնդել «Թուրքական պատմագիտական ընկերությունը» և գրքի հեղինակը: Այստեղ միտումնավոր կերպով աչքաթող է արվում այն փաստը, որ սույն դատական գործերը հարուցվել էին ոչ միայն հայերի տեղահանման (tehcir), այլ նաև՝ կոտորածների (taktil) մեղադրանքով: Բացի այդ՝ Ֆ. Աբան այս դատաքննություններին է անդրադառնում թուրքական պաշտոնական պատմագրությանը ձեռնտու դիտանկյունից՝ աղճատելով բազմաթիվ փաստեր: Օրինակ՝ նա պնդում է, թե իբր դատական նիստերում մեղադրյալների դեմ ուղղված ցուցմունքներով հանդես են եկել միայն ազգությամբ հայ վկաները, որոնք առաջնորդվել են վրեժխնդրության զգացումով, այնինչ Օսմանյան կայսրության տարբեր շրջանների հայերի տեղահանության և կոտորածների դատաքննությունների նիստերում հանդես են եկել ոչ միայն հայ, այլև՝ բազմաթիվ թուրք և այլազգի, մինչև անգամ՝ նախարարի ու նահանգապետի մակարդակով մի շարք թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ:

1919-1921 թթ. դատաքննությունների լուսաբանման հարցում հեղինակին օգնել են նաև մի քանի հայ[46] և օտարազգի[47] ուսումնասիրողների հոդվածները:

---

[43] **Akçam T.,** Ermeni Tabusu Aralanırken Diyalogtan Başka Çözüm Var mı?, İstanbul, 2002.

[44] **Şimşir B.,** Malta Sürgünleri, Bilgi Yayınevi, İstanbul, 1985.

[45] **Ata F.,** İşgal İstanbulu'nda Tehcir Yargılamaları, Ankara, 2005.

[46] **Գուշակճեան Մ.,** Տրապիզոնի եւ Սամսոնի նահանգներու տեղահանութիւնն ու ջարդերը, Գերսամ Ահարոնեան (խմբագրապետ «Զարթօնքի»), Յուշամատեան Սեծ Եղեռնի (1915-1965), Ատլաս տպարան, Պէյրութ, 1965, էջ 465-475; **Дадрян В.,** Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в Геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, "Геноцид-преступление против человечества (Материалы I Московского Международного Симпозиума 18-

Ատենախոսը 1919-1921 թթ. հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով կայացած դատաքննությունները 1926 թ. երիտթուրքերի դատավարությունների հետ համեմատելու նպատակով ուսումնասիրել է նաև 1926 թ. Իզմիրի և Անկարայի կամ «Սև ավազակախմբի» դատական գործերը: 1926 թ. դատավարությունների լուսաբանման առումով սկզբնաղբյուր են ծառայել Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության արխիվում պահվող որոշ նյութեր[48], Մուստաֆա Քեմալի՝ ժամանակի մամուլին տված հարցազրույցը[49] և թուրք պատմաբան Սեյհուն Թունաշարի մենագրությունը[50]:

Աշխատության՝ Թուրքիայի Հանրապետությունում իբրիհաղական մտայնության և ավանդույթի պահպանմանը վերաբերող հատվածի վերլուծելիս, վերևում նշված որոշ հեղինակներից բացի, օգտվել է նաև թուրք պատմաբաններ Շյուբրյու Հանիօղլուի[51] և Մեթե Թունչայի[52] աշխատություններից ու քուրդ ուսումնասիրող Գյուլչիչեք Գյունել Թեքինի[53] մենագրությունից:

---

19 апреля 1995 г.)", отв. ред. академик НАН Республики Армения В. А. Микаелян, Москва, 1997, с. 17-45; **Kévorkian R.,** La Turquie Face à ses Responsabilités. Les Procès des Criminels Jeunes Turcs (1918-1920), Revue d'Histoire de la SHOAH le Monde Juif, N 177-178, Janvier-Août 2003, p. 167-205; **Ավագյան Ա.,** 1915 թ. Օսմանյան Թուրքիայում օտարահպատակ և վատառողջ հայերի տեղահանման խնդրի վերաբերյալ (թուրքական արխիվի մեկ փաստաթղթի հիման վրա), Բանբեր Հայաստանի ախրիվների, թիվ 2 (106), Երևան, 2005, էջ 194-197; **Ավագյան Ա.,** 1915 թ. ցեղասպանության նախապատրաստական փուլից. Բեհաեդդին Շաքիրի այցն արևելյան նահանգներ, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» IV, Երևան, Ասողիկ, 2006, էջ 245-251:

[47] **Hür A.,** Malta Sürgünleri'ni Nasıl Bilirsiniz, "Taraf", 28 Şubat 2010.

[48] Архив Внешней Политики Российской Федерации, Фонд 132, Референтура по Турции, опись 11, папка 78, д. 34; Архив Внешней Политики Российской Федерации, Фонд 132, Референтура по Турции, опись 11, папка 79, д. 36.

[49] "Los Angeles Examiner Quote", 1 Auguste, 1926.

[50] **Tunaşar S.,** Gizemli Bir Devrimci Osmanlı'nın Dahiliye Vekili Cumhuriyetimizin İstanbul Milletvekili İsmail Canpolat (Janbulet), Piramit Yayıncılık, Ankara, 2004, 106 s.

[51] **Hanioğlu M. Ş.,** Osmanlı'dan Cumhuriyet'e Zihniyet, Siyaset ve Tarih, İstanbul, Bağlam Yayıncılık, 2009.

[52] **Tunçay M.,** Türkiye Cumhuriyeti'nde Tek-Parti Yönetimi'nin Kurulması (1923-1931), Tarih Vakfı Yurt Yayınları, İstanbul, 1999, 519 s.

[53] **Günel G.,** İttihat Terakki'den Günümüze Yek Tarz-ı Siyaset: Türkleştirme, Belge Yayınları, İstanbul, 2006, 455 s.

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից (որոնք իրենց հերթին բաժանվում են վեց ենթագլուխների), եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, ատենախոսության հիմնական նպատակներն ու խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը, ժամանակագրական սահմանները, կիրառական նշանակությունը, և ներկայացված են օգտագործված սկզբնաղբյուրներն ու գրականությունը:

Առաջին գլուխը՝ ***«Քաղաքական մթնոլորտը Թուրքիայում Մուդրոսի զինադադարի կնքումից հետո և Հայոց ցեղասպանության պատասխանատուների դեմ իրականացված հետաքննությունները»***, բաժանվում է երկու ենթագլխի: Առաջին ենթագլխում, որը վերնագրված է ***«Քաղաքական մթնոլորտը Թուրքիայում Մուդրոսի զինադադարի կնքումից հետո»***, ներկայացվում են Թուրքիայի ներքաղաքական կյանքում առկա տրամադրությունները Մուդրոսի զինադադարի կնքմանը (1918 թ. հոկտեմբերի 30) հաջորդած առաջին ամիսներին: Սույն ենթագլխում համառոտ անդրադարձ կա Հայոց ցեղասպանության հարցում երիտթուրքական կուսակցության ու կառավարության պատասխանատվության խնդրին, որի համատեքստում խիստ համառոտ լուսաբանվում է Մեծ եղեռնի նախապատրաստական փուլը: Այս ենթաբաժնում ներկայացվում են նաև հայերի կոտորածների քննարկումները ժամանակի օսմանյան մամուլում և խորհրդարանում, որոնց արդյունքում որոշվել է դատական պատասխանատվության ենթարկել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կատարված ոճրագործությունների, այդ թվում՝ հայերի տեղահանության և կոտորածների հեղինակներին:

Հաջորդ՝ ***«Հայոց ցեղասպանության պատասխանատուների դեմ իրականացված հետաքննությունները»*** ենթագլխում պարզաբանվում են հայերի տեղահանության և կոտորածների համար պատասխանատու անձանց դեմ գրեթե միաժամանակ երեք տարբեր հետաքննիչ հանձնաժողովների կողմից կատարված հետաքննությունները: Նշվում է, որ պատերազմի տարիներին հայերի տեղահանությունն ու ոչնչացումը կազմակերպելու և իրականացնելու մեջ մեղադրվողների առաջին ձերբակալությունները կատարվել էին 1918 թ. դեկտեմբերի սկզբներին և շարունակվել հետագա ամիսներին: Նրանց շարքում են եղել երիտթուրքական կուսակցության պարագլուխներ, պատգամավորներ, շրջանային պատասխանատու քարտուղարներ, բարձրաստիճան զինվորականներ և այլ պաշտոնատար անձինք: Ձերբակալվածների մեծ մասն արգելափակվել էր «Բեքիրաղա բյոլյուդյու» կոչվող զինվորական բանտում, որտեղ նրանց շնորհվել էին բանտային ռեժիմին անհամապատասխան ազատություններ: Կալանավորներն ազատ

ելումուտ էին արել մյուս կասկածյալների բանտախցերը և խորհրդակցել միմյանց հետ, այդ թվում նաև՝ ապագա դատաքննություններին հարմար պատասխաններ տալու հարցով: Բանտային ոչ խիստ պայմանների հետևանքով գրանցվել էին նաև փախուստի մի քանի դեպքեր: 1919 թ. հունվարի 8-ին Ստամբուլում կազմվել էին Առաջին, Երկրորդ և Երրորդ ռազմական ատյանները: Կայսրությունը բաժանվել էր 10 դատաքննչական շրջանների: Թեև, ըստ օրենքի, հանցագործները պետք է դատվեին ոճրի գործադրված վայրում, սակայն 1919 թ. փետրվարի 5-ին Ստամբուլի ռազմական ատյանը Յոզղատի տեղահանության և կոտորածների պատասխանատուների դատավարության առաջին նիստում հատուկ վճիռ էր կայացրել՝ մեղադրյալներին դատել մայրաքաղաքում:

Երկրորդ գլուխը, որը կրում է ***«Հայերի տեղահանության և կոտորածների դատավարությունները, իթթիհադականների պատասխանատվության հարցը և դրա նշանակությունը Թուրքիայում ծավալված ազգայնական շարժման մեջ»*** վերնագիրը, բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ ***«Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների դատավարությունը (1919 թ. ապրիլ-մայիս ամիսներ)»*** վերնագրված ենթագլխում նշվում է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների դատավարությունն սկսվել էր 1919 թ. ապրիլի 28-ին և շարունակվել մինչև նույն տարվա մայիսի 17-ը: Դատավարության ժամանակ հեռակա կարգով մեղադրվել էին 11, իսկ ներկա՝ 20 կուսակցական գործիչներ ու բարձրաստիճան պաշտոնյաներ: Սույն գլխում մանրամասն ներկայացվում է երիտթուրքերի կուսակցական և կառավարական գործիչների վերաբերյալ 41 միավոր պաշտոնական և կիսապաշտոնական բնագիր փաստաթղթերի հիման վրա կազմված մեղադրական ակտը, քանի որ այն բաղկացած էր այնպիսի խիստ կարևոր վավերագրերից, ինչպիսիք են ծածկագիր հեռագրերն ու բարձրաստիճան պաշտոնյաների, զինվորականների տված վկայությունները: Բացի այդ՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների դատավարության ամբաստանագրում արձանագրված փաստերն օգտագործվել էին նաև հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով կայացած այլ դատաքննությունների ժամանակ, հանգամանք, որը մեկ անգամ ևս հաստատում է, որ հայերի ջարդերը համակարգվել էին երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի ու կառավարության կողմից: Մեղադրական ակտն ընդգծում էր, որ հայերի բնաջնջումը նախապես որոշվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի մանրամասն քննարկումների արդյունքում: Ամբաստանագրում շեշտված էր, որ երիտթուրքական կուսակցության ղեկավարների կողմից բանտերից ազատված հանցագործներից ստեղծված «Հատուկ կազմակերպության» հրոսակախմբերի բուն նպատակն էր եղել ոճիրներ գործելը, և նշվում, թե տվյալ կազմակերպությունը սերտ կապերի մեջ էր եղել «Միություն և

առաջադիմություն» կուսակցության հետ, և որ սույն կազմակերպության գլխավոր պաշտոնյաները հանդիսանում էին կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ, նաև ընդգծվում, թե «Հատուկ կազմակերպության» ավազակները հետագայում օգտագործվել էին տարագրված հայերի բնաջնջումը կազմակերպելու նպատակով:

Ամբաստանագրում շեշտվում էր, թե հայերի տեղահանության ընթացքում տարբեր ժամանակներում և վայրերում տեղի ունեցած հանցագործությունների հետաքննությունը բացահայտել էր, որ այդ ոճիրները ոչ թե տեղական բնույթ էին կրել, այլ կանխամտածվել և իրականացվել մեղադրյալներից կազմված «հատուկ կենտրոնի» բանավոր հրահանգներով ու գաղտնի հրամաններով, և լիովին ապացուցվել էր, որ հայերի կոտորածները կատարվել էին Թալեաթի, Էնվերի և Ջեմալի անմիջական հրահանգներով ու գիտությամբ: Ամբաստանագիրը նաև անդրադառնում էր կուսակցության պատասխանատու բարտուղարների այն առանցքային դերին, որ նրանք ունեցել էին ցեղասպանության իրականացման գործում: Ամբաստանագրում հերքվում էր նաև Մեծ եղեռնի հեղինակների և ցեղասպանությունը ժխտող թուրք պատմաբանների այն «փաստարկը», թե տեղահանությունն իրականացվել էր որպես ռազմական միջոցառում: Ըստ մեղադրական ակտի՝ հաշվի առնելով այն փաստը, որ, օրինակ, Բոլուն պատերազմական գոտի չէր համարվում , աներկբայորեն հավաստում էր, որ հայերի տարագրումն ուղղված էր եղել կուսակցության նպատակների և մտադրությունների իրականացմանը. նման գործողությունները չէին թխում ռազմական անհրաժեշտությունից: Դրանք ո՛չ պատժիչ գործողություններ էին, ո՛չ էլ՝ կարգապահական: Մեղադրական ակտը հատուկ անդրադառնում էր նաև հայերի բնաջնջման մեթոդներին, հայերի ունեցվածքի յուրացմանը և կատարված չարաշահումներին: Փաստաթղթում ընդգծվում էր, որ հայերի կոտորածների գործում, կուսակցության կազմակերպության ցանցի հետ մեկտեղ, ներգրավված էին նաև քաղաքացիական և ռազմական իշխանությունները, և որ ջարդերն ուղղորդվել ու վերահսկվել էին Ներքին գործերի նախարարության և անձամբ նախարար Թալեաթի կողմից: Ըստ ամբաստանագրի՝ գլխավոր հանցագործներ էին համարվում Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Ջեևդը, Բեհաեդդին Շաքիրը, դոկտոր Նազըմը, Աթիֆը, Ռըզա և Ազիզ բեյերը, իսկ մասնակիցներ՝ Միթհաթ Շյուքրյուն, դոկտոր Ռայտուտին, Քյուչյուք Թալեաթը, Զիյա Գյոքալփը, Քարա Քեմալը, Ահմեթ Նեսիմին, Շյուքրյուն, Հալիլը և Սայիթ Հալիմը:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության գործիչների դատավարության առաջին (1919 թ. ապրիլի 28) և երկրորդ (1919 թ. մայիսի 4) նիստերի ընթացքում դատապաշտպանները ժամանակ շահելու նպատակով հարցականի տակ էին դրել Ռազմական արտակարգ ատյանների՝ նախարարների նկատմամբ դատաքննություն իրականացնելու իրավասությունը՝ այն վերապահելով Գերագույն դատարանին և իրենց առարկությունները փորձելով հիմնավորել օսմանյան

Սահմանադրության մի շարք կետերով: Ռազմական ատյանը երիտթուրքական կուսակցության և կառավարության անդամների դատավարության առաջին և երկրորդ նիստերի ժամանակ հերքել էր դատապաշտպանների՝ Ռազմական ատյանի անհիրավասության վերաբերյալ փաստարկները: Ատենախոսության մեջ կարծիք է արտահայտվում, թե դատապաշտպանների բերած այն փաստարկը, թե նախարարները հանցավոր էին ի պաշտոնե, համապատասխանում էր իրականությանը. թեև հայերի բնաջնջման որոշումն ընդունվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղտնի նիստերում, սակայն Հայոց ցեղասպանության պատասխանատվությունն ընկնում էր նաև տվյալ ժամանակաշրջանի օսմանյան կառավարության ամբողջ պետական ապարատի վրա, քանի որ «Տեղահանության մասին» որոշումը հաստատվել էր Նախարարների և Պետական խորհուրդների կողմից, իսկ հայերի տարագրումն ու ոչնչացումը՝ իրականացվել պետական օղակների միջոցով:

1919 թ. ապրիլի 10-ին Յոզղատի հայերի տեղահանության և կոտորածների դատավճռով կախաղան բարձրացված Բողազլյանի գավառապետ Սեհմեթ Քեմալի մահապատժից հետո Թուրքիայում լարվել էր ներքաղաքական մթնոլորտը: 1919 թ. մայիսի 15-ին, երբ Հունաստանը գրավել էր Իզմիրը, արդեն իսկ լարված մթնոլորտն ավելի էր շիկացել, և 1919 թ. մայիսի 20-ից մինչև 23-ը Ստամբուլում զանգվածային ցույցեր էին կազմակերպվել դատավարությունների դեմ: Այս ցույցերը վկայում էին, որ երիտթուրքերը դեռ շարունակում էին մեծ ուժ ներկայացնել երկրում: Վարչապետ Դամաթ Ֆերիթի կառավարությունը լարվածությունը մեղմելու նպատակով ազատ էր արձակել վերոհիշյալ կալանավայրում արգելափակված 41 բանտարկյալների, ովքեր կասկածվում էին հատկապես հայերի կոտորածների հետ առնչություն ունենալու մեջ, և որոշել ժամանակավորապես դադարեցնել կուսակցության անդամների դատաքննությունը: Այս բոլոր իրադարձությունների ազդեցության տակ Մեծ Բրիտանիան որոշել էր «Բեքիրաղա բյոլյուղյու» բանտում արգելափակված մի շարք կալանավորների տեղափոխել ավելի ապահով մի վայր, քանի որ մտադիր էր սեփական դատարանի միջոցով դատապարտել պատերազմական հանցագործներին: Մալթա աքսորվածների շարքում էին նաև տվյալ պահին Ռազմական արտակարգ ատյանի կողմից դատվող մի քանի մեղադրյալներ, որոնց գործերն առանձնացվել էին՝ հետագայում քննվելու նպատակով, սակայն նրանք այդպես էլ չեն պատժվել: Թեև Մեծ Բրիտանիան սկզբում իրոք մտադրված է եղել դատապարտել Մալթա աքսորված պատերազմական հանցագործներին, այդ թվում նաև՝ Հայոց ցեղասպանության պատասխանատուներին, սակայն հետագայում նրա վճռականությունը հետզհետե թուլացել է, և ցեղասպանության ոճրագործներն ի վերջո փոխանակվել են անգլիացի ռազմագերիների հետ: Թուրք ամբաստանյալների՝ Մալթա աքսորվելուն հաջորդած ամիսներին

քաղաքական իրավիճակը Օսմանյան կայսրությունում սկսել էր փոխվել հօգուտ քեմալականների, ովքեր սկսել էին հետզհետե ավելի հզորանալ, իսկ սուլթանական կառավարությունը՝ թուլանալ:

Սույն ենթագլխում նաև նշվում է, թե քեմալական շարժումն իրականում առաջին հերթին ուղղված էր եղել ոչ թե Օսմանյան կայսրությունը մասնատել ցանկացող մեծ տերությունների, այլ՝ Թուրքիայի ազգային փոքրամասնությունների դեմ, և ընդգծվում է, որ ազգայնական շարժումը նախաձեռնվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից: Քանի որ ազգայնական շարժման սկզբնավորման ժամանակ թուրքերը, ի դեմս իթթիհադականների, մեղադրվում էին քրիստոնյա բնակչության նկատմամբ ցուցաբերած բռնությունների և հատկապես հայերի կոտորածների մեջ, քեմալականները սկզբնական փուլում ձգտում էին դաշնակից պետություններին ամեն կերպ համոզել, թե իբր իրենք ոչ մի կապ չունեն «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ: Սակայն իրականում ազգայնական շարժումը նախաձեռնողների մեջ մեծ թիվ էին կազմում Հայոց ցեղասպանության պատասխանատուները, իսկ այդ շարժման կորիզն էին «Հատուկ կազմակերպության» անդամները:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը, որը վերնագրված է ***«Պատերազմի տարիներին կառավարած երիտթուրքական վարչակազմերի անդամների դատավարությունը (1919 թ. հունիս-հուլիս ամիսներ)»***, նվիրված է իթթիհադական կառավարության անդամների դատաքննությանը: Կառավարության անդամների դատաքննության ժամանակ ներկա կարգով քննվել էին նախկին շեյխուլիսլամ (հոգևոր առաջնորդ) Մուսա Քյազիմի, փոստի և հեռագրատան նախկին նախարար Հյուսեին Հաշիմի ու սենատի նախկին նախագահ Ռիֆաթի գործերը: Դատավարության ժամանակ հեռակա կարգով շարունակել էին դատվել նախկին վարչապետ Թալեաթ փաշան, նախկին ռազմական նախարար Էնվեր փաշան, նախկին ռազմածովային նախարար Ջեմալ փաշան ու հանրակրթական նախկին նախարար դոկտոր Նազիմը: Այս դատավարության ընթացքում մեղադրյալների հարցաքննությունը հիմնականում կատարվել էր պատերազմի ժամանակ «Միություն և առաջադիմություն» կուսակցության գործունեության, պատերազմին մասնակցություն ցուցաբերելու նախաձեռնության ու տեղի ունեցած չարաշահումների ուղղությամբ: Երիտթուրքական կուսակցության և կառավարության անդամների դատաքննության առանձնահատկությունն այն էր, որ դրանց ընթացքում ոչ մի վկա չէր հրավիրվել: Ի տարբերություն այս մեղադրանքով հարուցված մյուս դատական գործերի՝ սույն դատաքննությունների ժամանակ հարցաքննվել էին միայն մեղադրյալները: Ատենախոսության մեջ հեղինակը կարծիք է արտահայտում, թե դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ այս դատավարությունների մեղադրական ակտերը կազմվել էին խիստ մանրակրկիտ հետաքննության, բազմաթիվ ապացույցների, պաշտոնական

ծածկագիր հեռագրերի ու վկաների ցուցմունքների հիման վրա: Կուսակցության և կառավարության անդամների դատաքննությունների ընդհանուր դատավճիռը կայացվել էր 1919 թ. հուլիսի 5-ին: Դատավճռում նշվում էր, թե գործի մանրամասն հետաքննությունը և դատավճռում բերված Ռազմական ատյանի 5 հոդվածները հաստատում էին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կատարած ոճրագործությունները: Վերոհիշյալ հոդվածներից առաջինում շեշտվում էր, թե Ռազմական ատյանի իրականացրած դատաքննության արդյունքում բացահայտվել էր, որ Տրապիզոնում, Յոզղատում և այլ վայրերում տեղի ունեցած կոտորածները կազմակերպվել և ուղղորդվել էին «Միություն ու առաջադիմություն» կուսակցության պարագլուխների կողմից: Սույն դատավճռով Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և դոկտոր Նազիմը դատապարտվել էին մահվան, Ջավիդը՝ Մուստաֆա Շերեֆը և շեյխուլիսլամ Մուսա Քյազիմը՝ 15 տարվա աքսորի, իսկ Ռըֆաթ ու Հաշիմ բեյերը՝ արդարացվել:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ ***«Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների դատավարությունը»***, մանրամասն ներկայացվում են երիտթուրքական կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների՝ 1919 թ. հունիսից մինչև 1920 թ. հունվար ընդմիջումներով ընթացած դատաքննությունները: Դատավարության սկզբում մեղադրյալները 7 հոգի էին եղել, բայց երրորդ նիստում նրանցից մեկի դեմ հարուցված դատական գործը կարճվել էր: Հետագա նիստերում ամբաստանյալների թիվը հասել էր 12-ի, և դատավճիռ էր կայացվել 12 մեղադրյալների վերաբերյալ: Պատասխանատու քարտուղարների դատավարության արդյունքում կայացված դատավճռի համաձայն՝ ամբաստանյալներից Քաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմին մահմեդական բնակչությանը շարունակաբար հայերի դեմ հրահրելու, սեփական նախաձեռնությամբ նահանգապետին պաշտոնազրկելու, հայերի գույքը յուրացնելու, իր կողմից նշանակված նոր նահանգապետ Աբիֆի հետ հայերի տեղահանությունն իրականացնելու համար դատապարտվել էր 10 տարվա տաժանակիր աքսորի: Դատարանը Բոլուի պատասխանատու քարտուղար Միթհաթին նույնպես դատապարտել էր 10 տարվա տաժանակիր աքսորի: Ամբաստանյալներից Էդիրնեի պատվիրակ Աբդուլ Գանին, դատավճռի համաձայն, մեծ ազդեցություն էր գործել տեղահանության գործի վրա, զինված հրոսակախմբերի հետ շրջել ամենուր, բռնագրավել հայերի դրամը, դիզել մեծ հարստություն: Քանի որ Աբդուլ Գանիի դեմ նույն մեղադրանքով դատական գործ էր հարուցվել նաև Էդիրնեի տեղահանության դատական գործի շրջանակներում, դատարանը որոշել էր նրա դատավճիռն ըստ այդմ կայացնել: Պատասխանատու քարտուղարների վերաբերյալ դատավճռով մեղադրյալներից Մանիսայի պատասխանատու քարտուղար Ավնի բեյը

դատապարտվել էր 9 ամսվա ազատազրկման: Մնացած ամբաստանյալներին դատարանն արդարացրել էր:

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում, որը կրում է ***«Հայերի տեղահանության և կոտորածների դատավարություններն ըստ շրջանների. առանձին անհատների դատաքննություններ»*** վերնագիրը, ամփոփ կերպով լուսաբանվում են 1919-1921 թթ. հայերի տեղահանման ու կոտորածների մեղադրանքով Ստամբուլի ռազմական արտակարգ ատյաններում քննված դատական գործերը, այդ թվում՝ Յոզղատի, Տրապիզոնի, Բյույուք Դերեի, Խարբերդի, Բաբերդի, Երզնկայի, Իզմիթի, Ադաբազարի, Ամասիայի, Դեր Զորի, Էդիրների, Էդինի, Քարամյուրսելի, Քըդիի, Սվասի և այլ շրջանների հայերի տեղահանության և կոտորածների դատաքննությունները: Դրանց շարքում առանձնահատուկ վերլուծության են ենթարկվում Յոզղատի և Տրապիզոնի դատաքննությունները, քանի որ սույն դատավարությունների ժամանակ ամենաշատ վկայություններն ու ապացույցներն էին բերվել կառավարությունից հրահանգներ ստացած տեղական իշխանությունների՝ հայերի տեղահանումը և ոչնչացումը համակարգելու և վերահսկելու վերաբերյալ:

Եզրակացության մեջ հեղինակի կողմից ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները, և արվում հետևյալ եզրակացությունները.

- Մուդրոսի զինադադարի կնքմանն անմիջապես հաջորդած ամիսներին Օսմանյան կայսրության հասարակության շրջանում նկատելի էր Առաջին աշխարհամարտում քրիստոնյաների դեմ իրականացված կոտորածների մեջ իթթիհադականներին մեղադրելու միտում: Այս ժամանակաշրջանում օսմանյան մամուլում խիստ մեղադրանքներ էին հնչում երիտթուրքերի դեմ: Հատկապես սուր կերպով էր քննադատվում հայերի նկատմամբ նրանց վարած քաղաքականությունը: Հայերի տեղահանության և կոտորածների խնդիրն ընդգրկվել էր նաև տվյալ ժամանակաշրջանի օսմանյան խորհրդարանի օրակարգ, որը դարձել էր թեժ վիճաբանությունների թատերաբեմ: Սույն քննարկումների արդյունքում փաստվել էր երիտթուրքական կուսակցության և կառավարության կատարած ոճրագործությունների իրողությունը: Դրանք քննելու նպատակով օսմանյան խորհրդարանում ստեղծվել էր Հինգերորդ հանձախումբը, որը երիտթուրքական կուսակցությանը մեղադրել էր պատերազմի տարիներին հայ բնակչության զանգվածային ոչնչացման և այդ բնաջնջումն իրականացնելու համար «Հատուկ կազմակերպություն» անվամբ անօրինական կառույց ստեղծելու մեջ:
- Հայոց ցեղասպանության պատասխանատուների հետաքննությունը Օսմանյան կայսրությունում գրեթե միաժամանակ իրականացվել էր երեք տարբեր հետաքննիչ հանձնաժողովների կողմից, որոնք էին օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնախումբը, Հանցագործությունների հետաքննիչ հանձնաժողովը կամ Մազիարի հանձնաժողովը և Ռազմական արտակարգ ատյանին կից հիմնված 5

հետաքննող հանձնաժողովները, որոնք ձեռք էին բերել հայերի կոտորածները հաստատող բազմաթիվ փաստաթղթեր, որ հանձնվել էին Ռազմական արտակարգ ատյանների դատախազներին:

- 1919 թ. «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների դատավարության ժամանակ դատարանը ձգտել էր հայերի զանգվածային կոտորածները կազմակերպելու մեջ մեղավոր ճանաչել միայն «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը ներկայացնող կառավարությանը և ոչ թե իրականում այդ գործի մեջ ներգրավված բոլոր պատասխանատուներին, իսկ իրենք՝ երիտթուրքերը և նրանց կողմնակիցները, ընդհակառակը՝ ամեն կերպ փորձել էին չվարկաբեկել կուսակցության անունը՝ ձգտելով մեղքը բարդել միայն առանձին անհատների և ոչ թե կուսակցության վրա:
- 1919 թ. «Միություն և առաջադիմություն» կուսակցության և կառավարության անդամների գործի ամբաստանագրում արձանագրվել էր, որ երիտթուրքական կուսակցությունն ու կառավարությունը բացահայտ հրաման էին արձակել հայերի կոտորածների վերաբերյալ: Մեղադրական ակտում ընդգծվել էր, որ իթթիհադականներն օգտվել են Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ իրենց գաղտնի ծրագրերը (իմա՝ Հայոց ցեղասպանությունը) իրականացնելու համար:
- Ռազմական արտակարգ ատյանները հիմնականում խուսափել էին մահվան դատապարտել դատավարություններին ներկա գտնված ամբաստանյալներին: Դա որոշ չափով պայմանավորված էր դատավարությունների ձևական բնույթով, քանի որ սուլթանական կառավարությանը հայերի տեղահանության ու կոտորածների պատասխանատուներին դատելուն էր մղել ոչ թե արդարադատություն գործադրելու ցանկությունը, այլ՝ հիմնականում պատերազմում հաղթանակած պետությունների վրա նման տպավորություն թողնելու ձգտումը: Ասվածը չի վերաբերում մյուս մեղադրանքներին, քանի որ Առաջին աշխարհամարտի մեջ երկրի ներքաշման և պատերազմի ժամանակ, հատկապես սենդի հարցում, կատարված չարաշահումների մեղադրանքները կրկնվել են նաև 1926 թ. կայացած երիտթուրքերի դատական գործերում:
- Թեև հայերի կոտորածների հետաքննությունը և դատավարությունը շրջան առ շրջան իրականացնելը գործնական տեսանկյունից ավելի նպատակահարմար է եղել, սակայն, ըստ էության, տեսականորեն դրանք կարող էին ամփոփվել նաև մեկ դատական գործի շրջանակներում և ավարտվել մեկ ընդհանուր դատավճռով, քանի որ խնդրո առարկան միևնույն ոճրագործությունն էր: Սակայն այդ դատաքննությունները շրջան առ շրջան իրականացնելը Ռազմական արտակարգ ատյանին ժամանակ շահելու և դատավարությունները դաշնակից պետությունների առաջ շահարկելու հնարավորություն էր ընձեռում:

• 1919-1921 թթ. երիտթուրքերի դատավարություններն ուղղված էին միայն «Միություն և առաջադիմություն» կուսակցության վերնախավի դեմ, որի վրա էր բարդվել թե՛ հայերի ոչնչացման և թե՛ Օսմանյան կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու մեղքը: Ընդ որում՝ այդ ծրագիրը մշակվել էր հենց երիտթուրքական կուսակցության կողմից, որպեսզի անհաջողության դեպքում կուսակցությունը փրկվեր, և պատասխանատվություն կրեին միայն նրա ղեկավարները: Դա էր հաստատում նաև այն փաստը, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության լուծարումից անմիջապես հետո 1918 թ. հոկտեմբերին երիտթուրքերի կողմից ստեղծված «Թեջեդդյութ» կուսակցության կազմավորման որոշման մեջ նշված էր, թե «Միություն և առաջադիմություն» կուսակցության քարձրաստիճան պաշտոնյաները չէին կարող անդամագրվել «Թեջեդդյութ» կուսակցությանը:

• 1919-1921 թթ. և 1926 թ. երիտթուրքերի դատավարությունների միջև որոշ զուգահեռներ անցկացնելու դեպքում կարելի է արձանագրել, որ դատավարությունների համընկնող մեղադրանքներն էին եղել՝ երկրի ներքաշումը Առաջին աշխարհամարտի մեջ և պատերազմի ժամանակ կատարված չարաշահումները: 1926 թ. դատավարության մեղադրանքների մեջ բացակայել էր հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքը: Այս դատավարությունների միջև էական տարբերություն էր նաև այն, որ 1919-1921 թթ. մեղադրյալներին թույլ էր տրվել դատապաշտպաններ վարձել, իսկ 1926 թ. դատական գործընթացների ժամանակ՝ ոչ: Բացի այդ, 1919-1921 թթ. դատավարությունների ժամանակ դատապարտյալները մահվան դատավճիռը բողոքարկելու հնարավորություն էին ունեցել, իսկ 1926 թ. զրկված էին եղել նաև դրանից: Վերոբերյալ փաստերը բացահայտում են որոշ թուրք պատմաբանների այն տեսակետի սնանկությունը, թե քանի որ 1919-1921 թթ. հայերի տեղահանության և կոտորածների դատաքննությունները կայացել են միջազգային ճնշման հետևանքով, դրանք օբյեկտիվ չեն եղել: Ընդհակառակը, Ռազմական արտակարգ ատյաններում ամբաստանյալներին շնորհվել են իրենց պաշտպանելու բոլոր հնարավորությունները՝ ի տարբերություն 1926 թ. կայացած երիտթուրքերի դատավարությունների:

• 1919-1921 թթ. և 1926 թ. դատավարությունները, «Միություն և առաջադիմությունը», որպես կուսակցություն, հեռացնելով պատմության թատերաբեմից, բնավ նպատակ չունեին և չէին կարող քաղաքականությունից վերացնել ո՛չ իթթիհադական ավանդույթներն ու գործելաոճը, ո՛չ էլ մտայնությունը: Հանրապետական շրջանում գործող գրեթե բոլոր թուրքական կուսակցությունները սերվել են «Միություն և առաջադիմություն» կուսակցությունից և օգտագործում են նույն գաղափարները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. **Անումյան Մ.,** Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն գիտահետազոտական հիմնադրամ, Երևան, 2011, 290 էջ (մենագրություն):
2. **Անումյան Մ.,** Յոզղատի և Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների դատավարություններն ըստ «Ալեմդար» օրաթերթի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր N 9, Երևան, 2004, էջ 64-87:
3. **Անումյան Մ.,** Հայերի տեղահանության և կոտորածների դատական գործերը. երեք մահապատիժ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ» հոդվածների ժողովածու, Երևան, 2005, էջ 68-72:
4. **Անումյան Մ.,** Մեծ եղեռնը հավաստող վկայություններ օսմանյան «Ալեմդար» օրաթերթում (1919 թ.), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ» հոդվածների ժողովածու, Երևան, 2006, էջ 34-41:
5. **Անումյան Մ.,** Մեծ եղեռնը հավաստող վկայություններ օսմանյան «Ալեմդար» օրաթերթում (1919 թ.), Բանբեր Հայաստանի արխիվների, N 1 (107), Երևան, 2006, էջ 310-317:
6. **Անումյան Մ.,** Հայոց բնաջնջումը Տրապիզոնի նահանգում տեղահանության և կոտորածների դատական վավերագրերի համաձայն, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ» հոդվածների ժողովածու, Երևան, 2007, էջ 17-22:
7. **Անումյան Մ.,** Թուրքիայում Հայոց ցեղասպանության պատասխանատուների հերոսացման հարցի շուրջ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ VII, Երևան, 2011, էջ 169-179:
8. **Անումյան Մ.,** Իթթիհատական ավանդույթի պահպանումը Թուրքիայի Հանրապետությունում. երիտթուրքերի 1919-1921 թթ. և 1926 թ. դատավարությունների համեմատական վերլուծություն, «ՎԷՄ» համահայկական հանդես, թիվ 1 (37), հունվար-մարտ 2012, Երևան, էջ 165-172:

Анумян Мелине Вагеевна

"ВОПРОС ГЕНОЦИДА АРМЯН В СУДЕБНЫХ ПРОЦЕССАХ НАД МЛАДОТУРКАМИ (1919-1921 ГГ.)"

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - "Всемирная история"

Защита состоится 19-го июля 2012 г., в 13.00 часов на заседании специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4

РЕЗЮМЕ

В диссертационной работе рассматривается проблема Геноцида армян в ходе судебных процессов над младотурками в Османской империи в 1919-1921 гг.

Изучение судебных процессов над младотурками в 1919-1921 гг. имеет важное научное значение с точки зрения освещения проблем истории и идеологии младотурецкой партии, а также для выявления механизмов организации и осуществления геноцида. Научный анализ судебных процессов над младотурками приобретает важное значение в контексте международного признания Геноцида армян ввиду того, что во время этих судебных процессов Османская империя, правоприемницей которой является Республика Турция, признала факт преступления - уничтожение армянского населения империи. Всестороннее и всеобъемлющее изучение судебных процессов над младотурками важно также в контексте выявления новых официальных документов Геноцида армян.

Выбор темы диссертации обусловлен необходимостью всестороннего научного изучения и анализа судебных процессов над младотурецкой партией "Единение и Прогресс" в Османской империи.

Диссертационная работа состоит из введения, двух глав, которые подразделяются на параграфы, заключения, списка использованных источников и литературы.

Во введении представлены актуальность темы, основные цели и задачи исследования, научная новизна, практическое значение, временные рамки диссертации, степень изученности проблемы, анализ первоисточников и литературы.

Первая глава диссертации – ***"Политическая атмосфера в Турции после заключения Мудросского перемирия и расследования, совершенные против лиц, ответственных за Геноцид армян"***- подразделяется на две подглавы. Первая подглава озаглавлена как ***"Политическая атмосфера в Турции после заключения Мудросского перемирия"***, где представлены общественные настроения во внутриполитической жизни страны в первые месяцы после подписания перемирия со странами Антанты в Мудроссе (30 октября 1918 г.), когда в турецком обществе явственно просматривалась тенденция обвинения и дистанцирования от иттихадистов, а также отрицания связи с уничтожением христианского населения в годы войны. В данной подглаве кратко описывается и анализируется вопрос ответственности младотурецкой партии и правительства в вопросе Геноцида армян, а также в общих чертах представлен подготовительный этап геноцида. В этой подглаве представлены также обсуждения массового уничтожения армян в османской печати и парламенте, в результате которых было принято решение о привлечении к ответственности лиц, совершивших преступления в годы Первой мировой войны, в том числе организаторов депортации и уничтожения армян.

Во второй подглаве первой главы –***"Расследования, совершенные против лиц, ответственных за Геноцид армян"***- представлена деятельность почти одновременно созданных трех судебных следственных комиссий, которые расследовали преступления лиц, ответственных за организацию депортации и массового уничтожения армянского населения. Первой из этих следственных комиссий была Пятая комиссия османского парламента, которая проводила дознания министров, членов двух кабинетов, правивших страной во время войны. Вторая – Комиссия расследования преступлений, известная под названием "Комиссия Мазхара" и третья, следственная комиссия, созданная при Чрезвычайном военном трибунале Стамбула. Вышеупомянутые комиссии собрали множество свидетельств и официальных документов, которые были переданы в Военный трибунал Стамбула.

Вторая глава называется –***"Судебные процессы по вопросу депортации и уничтожения армян, вопрос ответственности иттихадистов и его значение для националистического движения в Турции"***- подразделяется на четыре подглавы.

Первая подглава –***"Судебный процесс против членов партии "Единение и Прогресс" (апрель-май 1919г.)"***- подчеркивает тот факт, что во время этих судебных процессов власти Османской империи стремились признать ответственным за организацию массового уничтожения армянского населения лишь правившее во время войны младотурецкое правительство, а не всех преступников, участвовавших в Геноциде армян. Сами младотурки и их сторонники стремились любой ценой не опорочить партию, стараясь ответственность за Геноцид армян переложить не на всю организацию, а на отдельные лица. В этой подглаве детально описывается обвинительный акт в отношении лиц из состава младотурецкой партии и правительства. Обвинительный акт был составлен на основе 41 официальных и полуофициальных оригинальных документов, в том числе таких особо

важных документов, как шифрованные телеграммы и свидетельские показания высших гражданских и военных лиц.

Вторая подглава второй главы –***"Судебный процесс против членов правящего во время войны младотурецкого правительства (июнь-июль 1919 г.)"***- посвящена судебному процессу над членами иттихадистского правительства. Во время второго этапа заседаний главного процесса обвиняемые в основном допрашивались по вопросу деятельности партии "Единение и Прогресс" во время войны, инициативы по втягиванию страны в войну и имевшим место во время войны злоупотреблениям.

Третья подглава второй главы –***"Судебный процесс ответственных секретарей партии "Единение и Прогресс"***- детально описывает судебные процессы над ответственными секретарями партии "Единение и Прогресс", действовавших в вилайетах. Судебные процессы с перерывами продолжались с июня 1919 г. по январь 1920 г.

Четвертая подглава второй главы –***"Судебные процессы по вопросу депортации и уничтожения армян по округам: судебные разбирательства против отдельных лиц"***- обобщает более 60 судебных дел, которые были расследованы в военном трибунале Стамбула в 1919-1921 гг. по обвинению в депортации и массовом уничтожении армян (tehcir ve taktil). Основываясь на новых османских первоисточниках, специальному научному анализу подвергаются судебные процессы Йозгата и Трапезунда. Кроме того, что эти два судебных процесса были первыми процессами, во время них было заслушано наибольшее количество свидетельских показаний и приведены доказательства, подтверждающие факты получения вилайетскими властями приказов по депортации и уничтожению армян, а также раскрывающие механизм координации и контроля действий властей во время геноцида.

В заключении обобщены основные выводы диссертационной работы.

Anumyan V. Meline

THE ISSUE OF THE ARMENIAN GENOCIDE IN THE TRIALS OF YOUNG TURKS (1919-1921)

The Defense of the Dissertation will take place at 13.00, on July 19, 2012 at the Meeting of Specialized Council 006 acting at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4.

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02

SUMMARY

The examination of the Young Turks' trials in the Ottoman Empire in 1919-1921 has a scientific significance for comprehending the history and ideology of the Young Turks' Party as well as for exploring the mechanisms of organization and execution of the Armenian Genocide. The analysis of the 1919-1921 trails of the Ittihad gains particular importance especially in the context of international recognition of the Armenian Genocide on the eve of its 100th anniversary. It is unequivocal that the Ottoman Empire, the legal successor of which is the Turkish Republic, through the trails had officially acknowledged the atrocity. A comprehensive study of the 1919-1921 lawsuits is also important in the context of publication of new documents on the Armenian Genocide.

The choice of the dissertation topic is guided by the need for a comprehensive analysis of all trails of the Union and Progress Party in the Ottoman Empire.

The dissertation consists of an introduction, two chapters, divided into six sections, a conclusion and a bibliography of sources and relevant literature.

The introduction substantiates the contemporary importance of the chosen topic and its timeframe, highlights the main objectives and goals of the dissertations, its scientific novelty, practical implication, as well as reflects on the used sources and literature.

The first chapter is entitled ***"The Political atmosphere in Turkey after the Mudros Armistice and the Investigations on perpetrators of the Armenian Genocide".*** It has two sections. ***"The Political atmosphere in Turkey after conclusion of the Armistice of Mudros"*** describes the trends of the Turkish internal politics just after the conclusion of the Armistice of Mudros on October 30, 1918. There was a clear tendency to reproach and condemn the Union and Progress Party as well as to deny any relations to the massacres of Christians. This section also briefly reflects on the responsibility of the Young Turks' Party and Government for the Armenian Genocide. In this context the preparation

phase of the Armenian genocide is very briefly touched upon. This section also dwels upon the discussions on Armenian massacres in the contemporary Ottoman press and Parliament, which resulted in a decision to prosecute the perpetrators of the atrocities during the World War I, including those responsible for deportations and massacres of Armenians.

The second section is entitled ***"The Investigations on perpetrators of the Armenian Genocide".*** It elaborates on investigations on perpetrators of the Armenian deportations and massacres carried out simultainously by three different commissions, including by the Fifth Commission of the Ottoman Parliament. The Fifth Commission interrogated members of two Young Turk administrations, which were in power during the World War I. Another Commission was dealing with the investigation of criminal activities and was also known as the Mazhar Commission. Yet the third one was an inquiry commission set as an adjunct body of Istanbul Special Military Tribunal. All three commissions had identified numerous evidences which were submitted to the Istanbul Military Tribunal.

The second chapter is entitled ***"Trials on the Armenian Deportations and Massacres, the responsibility of members of Ittihad and implications on nationalist movement in Turkey".*** It has four sections.

The first section is entitled ***"Trials of Union and Progress Party's members (April-May, 1919)".*** It highlights that Ottoman authorities strived to blame solely the "Union and Progress" government for the massacres of Armenians rather than large masses that were involved in the killings. As for the Young Turks and their supporters they tried to protect the reputation of the party by putting the blame only on specific individuals and not on the organization as a whole. This section is particularly focused on detailed account of the verdicts on members of the Young Turk party and government officials, based on 41 official and semi-official original documents, including extremely important records such as coded telegrammes and testimonies of high ranking military and government officials.

The second section of the second chapter titled ***"Trials of members of the Young Turk administration governing during the war (June-July 1919)"*** focuses on the lawsuits of the members of Ittihad government. During the second round of Trials the interrogations of the defendants mostly concentrated on the role of Union and Progress party during the war, their initiative to enter the war, abuses and misconducts.

The third section of the second chapter is entitled ***"The trials of Regional responsible secretaries of the Union and Progress Party".*** It illustrates in detail the lawsuits of party regional responsible secretaries that took place intermittently from July 1919 through January 1920.

The fourth section of the second chapter is entitled ***"Armenian deportations and massacres by regions: individual trials".*** It briefly dwells upon more than 60 lawsuits that were discussed in special military tribunals of

Istanbul with a charge on Armenian deportations and massacres (*tehcir ve taktil*). Among these the Yozghat and Trabzon Trials, which preceded the others, are discussed in a more detailed manner based on the new Ottoman documents. These trails had the richest evidence and testimonies on coordination and control of Armenian deportations and massacres by local authorities that were acting according to the directives from the Government.

The conclusion summarizes the main findings of the dissertation.